



ԲԱԺՆԵԳԻՆ

Գալկարիա
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5 "

Արտաշատ
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "

Ամերիկա
2 Տոլ. 30 սենդ

ԿԱՆԻՍԻԿ



Հասցե
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱՐԱԹԱՀԱՆԴԵՍ . ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵԾՏԱԿԱՆ

Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

Ե. ՏԱՐԻ

ԱՊՐԻԼ . 27 ՇԱՐԱԹ 1901

ԹԻԻ 201

210

Հ Ն Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

«Բանասեր»-ի Տիար Խմբագիրը վերջերս ի Կովկաս շրջած ճամբորդութեանը մասին հետեւեալ շահեկան տեղեկութիւնները կուտայ մեզ իր հանդէսին միջոցաւ :

Մ Ե Ր Հ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ը

Ինչպէս յայտնի է շատերու, հնախօսական ուսումնասիրութիւններ կատարելու համար Ն. Ս. Օ. ՎԵՏ. Հայրապետի հրաւիրանօք եւ Փրանսայի կրթական նախարարութեան մասնագէտներու յանձնարարութեամբ Կովկաս այցելած էի չորս ամիս առաջ : Իմ այս բացակայութեան միջոցին «Բանասեր»-ի տպագրութիւնը կը շարունակուէր : Նոյնը պիտի լինի եւ յառաջիկայ տարուան համար :

Ուսումնական ուղեւորութեանս արդիւնքը մաս առ մաս պիտի հաղորդեմ «Բանասեր»-ի թերթի տղաներուն ՄԵՐ ՀՆՈՒԹԻԻՆՆԵՐԸ վերնագրով մասնաւոր յօդուածներով, որոնք պիտի պարունակեն մեր հին վանքերու, բերդերու, գեղարուեստական ու մանաւանդ ճարտարապետական մնացորդներու, հին արձանագրութիւններու եւ ձեռագրաց իսկասիս պատկերներ, հանդերձ մանրամասն տեղեկութիւններով, հնախօսական ու պատմական ծանօթութիւններով եւ արձանագրութեանց ստույգ եւ անթերի հրատարակութեամբ, որով յետոյ պիտի կազմուի իմ ՀԱՅԱՐԱՊԱՆ աշուն երկասիրութիւնը : Ծանրանալով մեր արձանագրութեանց կարեւորութեան վրայ, ինչպէս «Մշակ»-ի մէջ ալ շեշտած եմ արդէն («Մշակ» 1900 դեկտ. 8), բացարձակ կերպով կա-

րող եմ ըսել թէ մենք հայերս չունինք գիտնական ուղեւորութեամբ հրատարակութիւն մը որ կարենայ դահացնել այագիտութեամբ պարագող բանասէրները : Ինչ որ հրատարակած են, եւ կամ աւելի ճիշտը հրատարակել փորձած են Շահխաթունեան, Զալալեան եւ վերջերս Ալիշան, լի են աններելի սխալներով, եւ հազիւ թէ պարունակեն արձանագրութեանց կէս մասը միայն :

Նորին Վեհափառութիւն Խրիմեան Հայրիկ ըզգալով իմ վերեւ յիշած ծրարի համեմատ գիտնական աշխատութեան մը պէտքը, հրամայեց ինձ ամառներն անցունել ի Կովկաս, ընծայելով հարկ եղած ամէն բարոյական դիւրութիւն արձանագրութիւններ հաւաքելու համար : Եւ արդէն բաւական նիւթեր ու լուսանկարներ հաւաքեցի այս առաջին ուսումնական ուղեւորութեանս միջոցին :

Վեր ի վերոյ գաղափար մը տալու համար այս առաջին ուղեւորութեանս արդեանց վրայ, պարտ կը համարեմ յիշատակել թէ առիթ ունեցայ այցելել Էջմիածնայ, Հռիփսիմէի, Շողակաթի, Գայիանէի, Զուարթնոց, Օշականի, Մոլոնու Յովհաննավանուց, Մաղմոսավանուց, Սեւանայ, Աղեքսանդրոպոլի մեր հին մենաստաններն ու տաճարները, օրինակել այս աղգային յիշակերտներու մէջ ամփոփուած դարաւոր արձանագրութիւնները, ճշգրտով անճիշտներն եւ ի լոյս հանելով աշտիպները, որոնք մեծամասնութիւն կը կաղմեն : Լուսանկարել տուի կամ անձամբ լուսանկարեցի մեր բոլոր այս եւ ուրիշ պատուական հնութիւններ : Անձամբ կաղապարեցի յիշեալ արձանագրութեանց կարեւորագոյնները : Նաեւ հետազոտեցի նոյն հաստատութեանց մէջ հաւաքուած ձեռագիրները, անտիպ գործեր իսկ երեւան հանելու բարեբախդութիւնն ունենալով :

Երկրորդ ուղեւորութեանս վերապահած եմ այցելել ու քննել Շուշալէրի, Հաղբատի, Սանահնի, Մարցի, Հաղարծնի, Խաչերի, Գոշ-Մխիթարի, Մակարայ եւ Վարագայ Վանուց, Աղստաֆայի, Գանձակի, Իգիթի-դէօրտի, Թարթարի եւ շրջակայից, Գանձասարի եւ Գանձասարի ձորով՝ Հաչին-ղայայի, նոյնպէս եւ Գանձասարի շրջակայ ս. Յակոբ ու ս. Գէորգ վանուց, Խօթավանքի եւ շրջակայից, Այրումների, Սօթ լեռանց շրջակայից, Կեղարքունեաց, Նոր-Բայազիդի եւ շրջակայից, Փաշաքէնդի, Դիւքքէնդի, Սեւանայ լճափի, Զաղալուի, Ելենովկայի Բօտակայ Այրիվանուց եւ նորա շրջակայ լեռանցամիջի, Օրդակուի, Դարաչիչակի, Կեչառու եւ ալ մերջակայ վանօրէից, Բշուռ, Արդաքեանդի, Ալափարսի, Եղվարդի, Ապարանի, Բիւրականի, Իլդըրի, Արագածի հարաւային ստորոտը գտնուող բազմաթիւ վայրերու, Ղիչաղիկամ Հառիճոյ վանուց, Շիրակի եւ մասնաւորապէս Անույ, Խօշավանքի, Բադարանի, Յանոյ, Կաղզուանի, Կողբայ, Իկտի-րի եւ Արհաճ բլրով բոլոր աղգային հնութիւնները:

Երրորդ գիտնական արշաւանք մըն ալ պիտի կատարեմ նորէն դէպի Էջմիածին եւ անտի Խորվիրապ, Հին-Նախիջեւան, Երնջակ, Կարմիր վանք, Ագուլիս, Օրդուբադ, Մեղրի, Ղապան, Հալիճոր, Արծուանիք, Երից մանկանց վանք, Տաթև, Միւս Հալիճոր, Շնհեր, Գէօրիս, Ծիծեռնավանք, Ուրտնավանք, Ղարաքիլիսէ, Բռնակոթ, Դարալագեազ, Գեղարդ, Ղըրխ-բուլաղ, Զրվէժ, Քանաքեռ ու Երեւան:

Իսկ եթէ պարագաներն ու միջոցներս ներեն, ն. Ս. Օծութեան բարձր հրամանին համաձայն որոշած եմ Պարսկահայաստան եւ Տաճկահայաստան ալ անցնելով հետազօտել աղգային հնախօսութեան թանկագին գանձերն ու անսպառ աղբիւրները, անցելոյն պատմութիւնն անմոռաց եւ անկորուստ պահելու նպատակով:

Արդ ներկայիս անգամ մըն ալ պարտիմ հրապարակաւ մատուցանել երախտագիտական զգացմանս անկեղծ հաւաստիքն առ Վեհ. Հայրիկն մեր, որ հաճեցաւ ինձ յանձնարարել այն տեսակ աշխատութիւն մը՝ զոր ի մանուկ տիրոց կը սիրէի հոգով եւ որուն նուիրուեցայ յաւէտ: Բայց պէտք է գիտնալ որ այս տեսակ աշխատութեան մը համար նիւթական աշակցութեան ալ պէտք կայ. վասն զի երթեկի, գիւղերու մէջ ապրելու, հարկ եղած ատեն գիւղացիներէ փոքր ծառայութիւններ խնդրելու, կարեւոր հնութեանց լուսանկարներն առնելու եւ այլ մանր մունր բաներու համար ծախքեր հարկաւոր են: Այս գործին յաշուութեան համար հազար ուրբլի մը բաւական է կարծեմ:—Եւ բացարձակա-

պէս կը յայտարարեմ թէ իմ բոլոր աշխատանքիս, կրեւիք տանջանքներուս եւ ընելիք զոհողութիւններուս փոխարէն կոպէկ մը իսկ վարձատրութիւն չեմ պահանջեր ոչ ոքից. ես ինքզինքս վարձատրուած կը նկատեմ այն ատեն երբ յաջողիմ պատրաստել ՀԱՅԱՐՁԱՆ աշխատութիւնս:—Արդ եթէ ուրիշ հնասէր աղգայիններ ալ նիւթապէս օժանդակեն այսպիսի ձեռնարկի մը ի կատար ածման համար՝ այն ժամանակ իրական արձան մը կանգնած պիտի ըլլան մեր հայրենի աւերակներու մնացորդ նշխարներով ու նշմարներով, իսկապէս արժանի ՀԱՅԱՐՁԱՆ անուանակոչութեան:

Այս համոզմամբ եւ իմ խոնարհ ջանքերը դընահատող աղգայիններու աշակցութեամբ որոշած եմ բանալ հանգանակութիւն մը որոյ արդիւնքը միմիայն յիշեալ նպատակի իրագործման պիտի յատկացուի: Ուստի հրաւեր կը կարգամ յարգելի ընթերցողացս որ հաճին մասնակցիլ սոյն հանգանակութեան, խոստանալով հանգիսիս միջոցաւ հետզհետէ հրատարակել նուիրատուաց անունները: Ուրախ եմ որ այսօր իսկ կարող կը լինիմ հանգանակութեան առաջին ցուցակն հրատարակել:

Մեծ. Տեարք Մինաս Զերտղ Փր. 20,—

Յ. Իսկէնտէր „ 50,—

Հոգեւոր Հովիւ Հայոց Փարիզի Տ. Վահագն.

Քհ. Քիպարեան „ 30,—

Յակոբ Դաբրիէլեան „ 20,—

Կ. Յ. ԲԱՍՄԱԶԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

Ի նպաստ Աղգ. Հիւանդանոցի Մանչեսթերաքնակ աղգային մը 100 անդլիական ոսկի նուիրած է. նոյնպէս ի Լոնտոն բնակեալ Տ. Մովսէսնօֆ՝ 84 անդլ. ոսկի. Տիգրան Խան Քէլէկեան ալ 500 ֆրանք:

—Զատիկի առթիւ Պոլսոյ եկեղեցիներուն մէջ ի նպաստ աղգին տան շրջապայած պիտի կատարուի գոյացած է 8986 շրուշ:

—Ամերիկահայ թերթերէն ուրախութեամբ կը տեղեկանանք թէ՝ Նիւ-Եորքէ Հայուհեաց Ուրբախեամբ ընկերութիւնը՝ Վանայ Սալնապատի մէջ պատասպարած 20 աղջիկ որբերու թիւը 30ի բարձրացուցած է:

—Կը լսենք թէ Հայկական Կրթարանի տընօրէն Պ. Կ. Միքայէլեան այս հինգշաբթի օրէն իր վարժարանը փակել է անպայման կերպով:

—Սօֆիայէ կը գրեն թէ «Կրօն. Ժողովը

նկատելով որ Պուլկարիոյ մէջ Գէորգ Վ. Նալ-
բանտեանի համար յարմար տեղ չի կայ, որոշեց
որ յիշեալ վարդապետը էջմիածնայ Վանքը եր-
թայ»:

Բոժ. — Այն ատեն՝ «Խաղաղութիւն ամենե-
ցուն» պիտի ըլլայ:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Վանա, 1901 Ապրիլ 27

. . . Խմբագիր,

Հաճեցէք անկիւն մը շնորհել մեր սոյն նամակին
Ձեր ազգօգուտ թերթին մէջ:

Կարգացինք «Իրաւունքոյի չորեքշաբթի օրուան
թիւին մէջ Պ. Կրօն Միքայելեանի յիշեալ թերթին խմ-
բագրութեանը զրկած նամակը:

Նախ՝ բանի որ Պ. Կրօն Միքայելեան նամակ մը
ստացած էր Օտէսայէ «շուրջ երկու շաբաթէ ի վեր»,
ինչո՞հ համար իր անձին ու հաստատութեանը գէժ ե-
ղած անիրաւ (?) յարձակումներուն անմիջական պա-
տասխան մը տալ չիուզած:

Երկրորդ՝ Պ. Կրօն Միքայելեան, որ —ինչպէս ու-
րիշ ու է դաստիարակ— պարտականութիւնը ունի
իր աշակերտներուն քառոյսականի ճամբան միայն ցու-
ցնել, ինչո՞հ համար իր ըրած մէկ մեծ (?) բարիքը կը
հրապարակէ:

Երրորդ՝ Պ. Կրօն Միքայելեան անթիւն օգտուե-
լով կը ծանուցանէ ի գիտութիւն հետաքրքրողներու թէ
վարժարանին հիմնարկութենէն ի վեր 60ի չափ ձրիա-
վարժ աշակերտներ ունեցած է (??) որոնցմէ մէկ բա-
նի հատեր ալ իր սեղանէն կերակրուած, սնած և հա-
գուստ ու կապուստ ընդունած են: Պահած է եղերնա-
նէ գիշերօթիկ աշակերտ բոլորովին անթոշակ եւ կի-
սաթոշակ (անշուշտ տասնեակէ մը աւելի ??):

Եւրդ՝ կը խնդրենք Պ. Կրօն Միքայելեանէ որ հա-
ճի տեղական թերթերու միջոցաւ բոլոր այս 60 (° ° °)
ձրիավարժ ուսանողներուն անուններու ցանկը, —գոնէ
անոնց սկզբնատառերը— հրատարակութեան տալ որ-
պէս զի գոհացում տուած ըլլայ մեզ հետ բազմաթիւ
հետաքրքրողներու ալ:

Գալով Օտէսայէ «Իրաւունքոյի Խմբագրութեան
զրկուած ծանօթ պատուաւոր վաճառականի մը նամակին
«աղբաւ երախաների համար բանի մը ազգայիններէ
մաս մը զրամ հանգանակած է» ըսելուն՝ սա իր արժե-

քը կորսնցնէ, բանի որ Պ. Կրօն իր ծանօթ բացատրու-
թեամբը խոստովանած է թէ յաւնումն հաստատութեա-
նը հանգանակած է եւ ոչ թէ աղբաւ երախաների
համար:

Բանի մը հետաքրքրողներ

ՓՈՔՐ ԽՂԹԱՏԱՐ

Պետրոս Արդարօֆ, Վանա. — Պէտք է անձամբ
տեսնուիք մեզի հետ:

Ե. Գ. Պ. Տոպրիչ — Քահանան պաշտօնով մը շու-
րա գացած է, վերադարձին ձեր նամակը իրեն պիտի ներ-
կայացնենք ու բացատրութիւնը ուղենք, թէեւ վստահ
ենք որ ձեր մասին երկու վկայից ներկայութեամբ մեզի
ըսած նոյն բանին վրայ պիտի պեղէ:

ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ

Գէորգ Ղազարեան 25 տարեկան բնիկ Տրապզոն-
ցի երիտասարդը, որ դէպքերէն ետքը Ռուսիա գացած
էր, այժմ Ամերիկա կը գտնուի. կը խնդրուի յիշեալին
հասցէն իմացնել Խմբագրութեան:

ՎՐԻՊԱԿ

Անցեալ թիւով հրատարակուած «Սիրային կայծեր»-ու
Հակարձագանքին առաջին երկու տողերը պիտի ըլլան այս-
պէս.

Հաւր քուս . . . քշուս ախշօր

Միմակուկ

Ձուր պոռացիր ախ աւեւն օր

Կուկուկուկ:

Բարեյիշատակ եղիագար Մուրատեանի հե-
ղինակած «Քննական Պատմութիւն Արշակ Բ. ի և
անոր Պապ որդւոյն» անուն երկասիրութիւնը այս
անգամ լոյս տեսած է Ալեքսանդրիոյ «Արաքս»
նորահաստատ տպարանէն և կը ծախուի ի գին
2¹/₂ ֆրանք: Պուլկարիոյ և Ռուսմանիոյ մէջ ստա-
նալ փափագողք գիմելու են մեր Խմբագրու-
թեան:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լուսանկար՝ առանց գործիքի

Նկարի մը կամ գրքի մէջ տպուած պատկերի մը ընդօրինակութիւնն առնելու համար անպատճառ մասնաւոր գործիքներու պէտք կար: Անգլիացի գիտնական Մր. Սմիթ պարզ միջոց մը գտած է, որով կարելի է լուսանկարներ ընդօրինակել առանց շանկոյն նուազի: Տեսէք ինչպէս կ'ընէ. — Թանձրաքարտի կտոր մը առնելով վրան փոսփորափայլ նիւթ մը կը քսէ և ընդօրինակելու պատկերին հետեւ կը դրնէ, ըսն երեսին վրայ ալ սովորական զգայուն քրաֆ մը դնելով: Յետոյ գիրքը կը գոցէ և թըղթին թանձրութեան կամ տեսակին համեմատ 20—60 վայրկեան գոց կը պահէ: Ամենքն աս է: Ոչ քրաֆը, որ չոր է և ոչ թանձրաքարտը, որ փոսփորափայլ է, բնաւ չեն փնասեր գրքին: Այս կերպով մեծարժէք գիրքերուն մէջէն ալ կարելի է պատկերներ ընդօրինակել:

Անթել Լոյս

Անթել հեռագրութենէն ետքը, անթել լոյս, այսինքն՝ միջոցը գտնուել է ելեկտրական լոյսն հաղորդելու առանց թելի, ուղղուած հեռաւորութեամբ տեղ մը լոյս չրկելու, առանց ելեկտրական հաղորդակցութեան սովորական միջոցներուն: Այս հաշուով օր մըն ալ զօրութիւնը կամ շարժիչ ուժը պիտի հաղորդուի առանց թելի:

ԾԻԾԱՂ

Տան մը մէջ

Էրիկը. — Ինչ կուի է որ կը լսուի այս վերջերս մեր դրացիին տունէն:
Կինը. — Ձեռք գիտե՞ս, անցեալ շաբթուադանին կարդեցին:

Կին մը խոր հիւանդ ամուսնոյն,

— Բժիշկը ըսաւ որ այսօր քեզմէ արիւն պիտի առնէ:

Հիւանդը. — Ինչ, արիւն մի՞. որ տեղէս արդեօք:

Կինը. — Մի վախճար սիրելիս անշուշտ քսակէդ:

Երկու տղաքներ

— Ծօ՛ Տրդատ, ես գիտեմ, քու մայրիկդ շատ հարուստ է:

— Ինչէն գիտես:

— Որովհետեւ ակռաներուն ալ ոսկի մատնի անցուցած է:

Էրիկ կնկան մէջ առտնին կռուոյ մը ատեն տիկինը խիստ զայրացած, ամուսնոյն ըսաւ:

— Կուգե՛ս որ մտքէս անցածը ըսեմ, անհամ սեխէ մը տարբերութիւն չունիս:

Ամուսինը փիլիսոփայաբար պատասխանեց:

— Տիկին, յիշեցէք որ իմ մէկ կողէս շինուած էք:

Երիտասարդին մէկը որ կանացի ձայն մը ունէր, անցեալ օր եկեղեցւոյ դրան քով կոյր աղքատի մը ողորմութիւն տալու պահուն ըսաւ:

— Առէ՛ք սա, բարի մարդ:

— Շնորհակալ եմ տիկին, ըսաւ կոյրը, ձայնէն չփոթելով:

— Բայց ես կին չեմ, ըսաւ մեր շիք միւսին աւելի կանացի ձայնով մը:

— Շնորհակալ եմ օրիորդ, ըսաւ աղքատը այս անգամ:

Անցեալները Եփրեմ աղան զաւկին անառակութիւններէն դառնապէս կը վանդատէր իր մէկ բարեկամին:

— Բայց պէտք է որ, ըսաւ բարեկամը անընդհատ խրատես զինքը, որ ետ կենայ իր յոռի ընթացքէն:

— Օհ ե՛ս... ինչ որ ըսեմ անօգուտ է բթամիտ եւ տգէտ մարդոց խօսքին կ'անսայ միայն, ահ կաղաչեմ, դու խօսէիր անգամ մը իրեն:

Պատրաստ հազուստի վաճառատուն մը տէրը կը հիւանդանայ ու վերջին օրը յուսահատած կը պրռայ:

— Կ'զգամ թէ ալ կեանքս թէլէ մը միայն կախուած է:

Ներկայ մը. — Անշուշտ ծախած հազուստներու կոճակներուն պէս:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

ԳՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կարելի է մեղ ըսեն թէ՝ « Գրականի Բառա-
րան » տեսած էինք, բայց գրականի յատկութիւն
լսած չէինք: Մեր հագած հագուստներն ամէն
օր ձեւափոխել և իբր թէ կոկել կը չանանք ան-
ընդհատ, աւելի վայելուչ և՛ ճաշակաւոր երե-
նալու համար: Գոյներու յատկութիւնները ու-
սումնասիրելով և կերպասներու ազնուագոյններն
նախագասելով, Եւրոպա մեզի անսպառ նորա-
ձեւութիւններ կը զրկէ, մենք ալ կոյր զկուրայն
անմիջապէս կը յարինք ատոնց:

Այս պարագային մէջ ելծէ կայ անպատեհու-
թիւն մը, այն ալ սա է թէ՛ մենք, *սնկեսագիտա-*
կան քննադիր տաղանդային, նախկին տոկուն
քթաններէն և ընտիր բրդեղէններէն՝ աժանը և
աղէկը ըսելով, անդալաբար մինչև խոտեղէնի
իշանք, որուն պատճառաւ բարեկամներէս մին
անցեալները քիչ մնաց ցաւալի վտանգի մը պի-
տի ենթարկուէր:

Այս բարեկամիս, 15 ֆրանքի բալթօ մը
հագած որ ամբողջովին բորդէ է ըսած էին իրեն,
կառքի անօթի ձիու մը քովէն անուշադիր ան-
ցած պահուն, ուշիմ անասունը հագած բալթօ-
յին պարզապէս խոտեղէն ըլլալն հասկնալով թե-
ւէն մեծկակ կոոր մը փրցունելով ախորժանօք
կերեր էր. բայց անասնասիրաբար միտը հետը
չէր փրցուցած, ի մեծ բարեբաղդութիւն մեր
հէգ բարեկամին:

Եւ մինչդեռ հագուստներնուս այսպէս վեր-
ջին աստիճան կարեւորութիւն կուտանք, ատոնց
գրականներուն յատկութիւններն ուսումնասիրել
ոչ ոքի մտքէն անցած է մինչև ցարդ. զի վերջա-
պէս յայտնի է որ, իմ գրականներս, միլիոնա-
տիրոջ մը գրականներու չեն կրնար հաւասարիլ:
Օրինակի համար, միլիոնատէրերու գրականները
բացարձակ հրամայել տալու յատկութիւնն ու-
նին, մինչդեռ իմ գրականներս, պաղատանօք
աղաչել տալու յատկութիւններով օժտեալ են մի-
այն:

Գրական կայոր մեղաւորը արդար կ'ընէ, գըր-
պան ալ կայ որ իրաւունքի տէրը անիրաւ ցոյց
կուտայ, ծակտէն գրականները տրտմութիւն կ'ազ-
դեն գործածողին եւ նիհար գրականներու տէր
եղովը թոքախտ ըլլալու ենթակայ է միշտ. կան
գրականներ, որ ամենէն քաղաքալար ու ամէկոտ
մարդն անգամ վերջին աստիճան « ուղտներան »
կ'ընեն:

Մէկ խօսքով, ստախօսութիւնը, յափշտա-
կութիւնը, վեհանձնութիւնը, նախանձը, վերջա-
պէս ամեն մոլութիւն եւ առաքինութիւն, գրպան-
ներու յատկութիւններ են, կ'ըսէ հռչակաւորն
ԲՕՒ ՏՐԻԹԵՂ, եւ իրաւունք ալ ունի:

Կարգ մը գրականներ ալ կան, որոնց
յատկութիւնները պարագաներու բերամբ յա-
րատե փոփոխման ենթակայ են. կը նայիս որ այս-
օր մեյամաղձոտ տխրութիւն կ'ազդեն, իսկ
հետեւալ օրը գուարթագին ուրախութիւն, հի-
մակուան օրացոյցներուն նման, որոնք մերթ
պարզ մերթ անձրեւ, և օրուան երգութիւնը շարա-
կանները նշանակելով տարին կը լրացնեն:

Ահա այս կարգի փոփոխական գրականներու
տէր Արսէն աղան, առջի գիշեր ժամը մէկ ու-
կէսին ատենները՝ ըստ սովորականին, գինետու-
նէն տուն վերադարձին, կինը սանդուղին գլու-
խէն ամուսինը դիմաւորելով ըսաւ.

— Բարեբրկուն, Արսէն աղա, ո՞ւր է, աս
իրիկուն ձուկ պիտի բերէիր տէ պիտի տապկէի:

— Վաղ անցիր ատամ. . . հիմա խուզին
կայ իբէն ձուկը կուտուի մի՞:

— Իէք թօհաֆ ես, Արսէն աղա, հապա երէկ
գիշեր վաղը իրիկուն ձուկ առնեմ տաք տաք
թավան բէք ազուր կ'ըլայ ըսիր:

— Երէկ գիշեր անանկ բան մըն էր ըսի,
կէճելիկս ո՞ւր է:

— Ներսի օտան. սէտիրին վրան է անցիր
հանուէ տէ, ես ալ կերակուրը վրայ դնեմ:

— Տահա կանուխ է, աս ատեն կերակուր
կ'ուտուի, հէլէ քանի մը բախի խմենք:

Տիկին Բրաբիոն օդին բլաղը բերելով
սեղանին վրայ դրաւ, եւ երկու գաւաթ լեցնե-
լով, ամուսնոյն ըսաւ.

— Արսէն աղա, սա տունին գործը լմացողի՞ր

— Տունին գործը ինչ է:

— Հապա առջի իրիկուն, հաճի բանաքոյին
թարաֆը ամառուան համար տուն մը բռնեմ
ըսիր:

— Առջի իրիկուն անանկ բան մըն էր ըսի.
հիմա ատոր պոչէն չեն բռներ երթար եա՛. . .

— Ըսել է քի, ֆիստանցուս ալ չպիտի առնես:

— Նաոր՛ Ֆիստանցու:

— Վա՛ւ, հիմա խելքիս կուգայ. քա անցած
շաբթու դուն չըսիր որ, գուրս ելելու ֆիստանգ-
բէք հինցիր է. տեղ մը աղէկ խումաշ մը տեսայ
առնեմ տէ ֆիստան մը կարել տուր տէյի. . .

— Նայէ ինչեր կ'ըսէ, անցած շաբթու ես
անանկ բան մըն էր ըսի. Աւետարանէն թուղթ
չի պատռեցի՞նք եա. դուն սըկէ բախի մը
լեցուր:

— Վախնամ, չիթթ մը բօթին առնեմ ըսելդ
ալ մոռցար:

—Ես քեզի բռնին առնեմ ե՞րբ ըսի :

—Տասնըհինգ օր առաջ ասանկ բէնճիրէ-
յին առջին նստեր էինք, դուն ըսիր քի, բռնին-
ներդ բէք է հինցեր քեզի չիֆդ. մը բռնին առ-
նեմ, ա՞ս ալ մոռցար :

—Տասնըհինգ օր առաջ ես անանկ բան մըն
էր ըսի. հիմայ վայր դուրս չես ելլար կոր եւ,
հայտէ գուն սա կերակուրը հազըր ըրէ տէ, լօխ-
մա մը բան ուտենք :

—Նասը՛լ կերակուր . . .

—Նասը՛լ կերակուր մի՛. . . տահա տէմին
դուն կըսէիր կոր քի, վար իջնամ կերակուրը
տաքը դնեմ :

—Ես ալ տէմին անանկ բան մըն էր ըսի.
փորդ անօթի է նէ, ինչիր, տաքցու կեր :

—Էյլէնճէյի մ'եկար, Բրաբիօն, առտուընէ
պէրի տասը բտրայի հացով, քսան բարայի բաս-
տըրմա կերեր եմ :

—Աղէկ միտքս եկաւ, բաստըրմա առնեմ
ըսիր, ո՞ր է :

—Էյ, իշտէ չկրցինք առնելու, ի՞նչ ը-
նեմ . . .

—Քա՛, դուն ինտո՞ր մարդ ես. մէկ սահա-
թըդ մէկալին ույմիչ չըլլար. տասը տարուան
կնիկդ եմ, տահա ի՞նչ թապիյէթի տէր ըլլալդ չի
սորվեցայ, պազի ես չուզած՝ կեկաս օխաներով
միս կը խաւրես, պազի ալ՝ կտոր մը բաստըրմա առ
ըսեմ նէ չես առներ, թամահքեար թապիյէթի
ալ չես : Անցած օր ես կէս օխա եաղ ուզեցի, դուն
գացիր երկու օխան մէկտեղ զրկեցիր. աս ի՞նչ
պիչիմ մարդ. ես, ինծի հասկցուր նայիմ :

—Ախ, ի՞նչ ըսեմ կնիկ, ես անանկ մարդ
մըն եմ որ միշտ ձեռքս բաց ըլլալ խարճել, քու
ամեն ուզածներդ առնել կուզեմ, ֆախաթ ճէ-
պիս ութին տակը ըլլալուս, ուզեմ չուզեմ անոր
ուզածին կէօրէ պիտի քալեմ. Ստակ ունեցած ա-
տենս տանը մէջի պէտք եղածները ես քեզի չեմ
հարցուներ. չեղած ատենն ալ խոստացածներս
ինչու չի բերել թէ որ ինծի չհարցունես, մենք
կատարեալպէս երջանիկ կըլլանք. սա պէտք է
գիտնաս որ իմ գրպաններս զիս մէյ մը տխուր
մէյ մը ուրախ երեցնելու խուփէթը ունին :

—Ըսել է քի առ ճէպէրդ ու գրպաններդ կը
խառնուին քեզի :

—Հապա ի՞նչ գիտցար. մարդուս ճէպը լե-
ցուն ըլլայ նէ՛ աղէկ մարդ է, պօշ եղա՞ւ մի,
երեսը մի նայիր, գէշ մարդ է :

—Վայնի վրաս, քա ես ի՞նչ մեղաց տէր եմ
եղեր որ օր մը օրանց ճէպս լեցուն եղած չէ :

—Անոր ալ խօլայը կայ, կնիկ, Աստուած թո-
ղութիւն շնորհեցէ կըսեմ. արձակուող կառնես :

—Նայէ՛, քանի մը զրուշ տամ տէ վրադ
գտնուի որ մեղաց տէր չըլլաս, կըսե՞ս :

—Ատ ըսածդ գրպաններուս յատկութենէն
կախումն ունի, ես միայն ուզած առնեմ. պօշ պօշ
արձակում կընամ տալ :

—Քա չըսե՞ս, առ հիսապով, ես տահա ամիս
ներով մեղաց տէր պիտի մնամ :

—Իշտէ արձակուող կուտամ կոր եւ :

—Աման դուն ալ . . . ես չ'որ արձակումը
ի՞նչ ընեմ, հէմէն գրպաններուդ կարողութիւնը
ինծի ոգորմի, որ իմ ալ երեսս խնդայ ըսելով,
կերակուրը տաքցնելու. համար խոհանոց իջաւ
մեր Բրաբիօն հանըմը, քթին սակէն գրպաննե-
րու յատկութեանց կարճառօտ աղօթք մը մըր-
մընջելով :

ՓԼԻԻՓ

ՅԵՐԱՅԻՄ

Քամչաթ քա

Նորէն աշուրնիս լոյս, Երբեմն իրտրու սոս-
կալի հակառակորդ երկաւ կուսակցութիւններ,
հինգշաբթի գիշեր փեղկափակ խանութի մը մէջ
զերար շերմադին համբուրեցին, շարկէ յղացաւ
Հայաստանը փրկելու համար 11րդ կուսակցու-
թեան մը սաղմը :

Ծնունդն ու անուանակոչութիւնը երկրորդ
գումարման մը մէջ պիտի որոշուի :

Բոժո. —Ալ անկասկած եմ թէ տոգիւնան
պիտի լեցուի :

Ուլիցա Բօթ բօթ

Վարժարանի մը տնօրէնը վարժուհիին վը-
րայ ծեծի վազեց, որովհետեւ այս վերջինը ի հա-
շիւ յետնեալ ամսականաց, անմիջական պէտքի
մը համար Միկ ֆրանք ուղելու քրէական յան-
ցանքը դորձած էր :

Բարեբաղդաբար դասատու մը հոն գտնուե-
լով, այդ մոլեգնեալ մարդուն ձեռքէն ազատեց
խեղճ օրիորդը որ յուզումէն ու վախէն մարե-
ցաւ եւ բժշկին դարմաններովը հոգիւ յուշա-
բերեցաւ :

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (17)

ՈՒՆԷ ՏՐ ԲՕՆ ՎԷ

ՍԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ԳԱՐՄԱՐ-ՄԱՄՈՒՆԸ)



Արդ Բերքինս համոզուած էր թէ գետին աւազակները մասը կը կաղմէին չարագործներու ահարկու ընկերակցութեան մը, «Ճերմակ Նունուֆարին», որ թէ ծովի և թէ ցամաքի վրայ խոյս կուտար ոստիկանութեան ձեռքէն, և մտածած էր որ Սօլ—Պրոտէի պաշտպանն ըլլալով, առիթ պիտի ունենար գողտնի ընկերակցութեան մասին քողելու այն տեղեկութիւններն որք անհրաժեշտ էին իրեն՝ ուղղուելու համար իր նպատակաւէտներէն մէկուն:

Առաջին բանն էր քննել իշխանին ուշը գրաւել մահապարտներուն վիճակին վրայ:

Պիտի տեսնենք թէ այս մասին իր յատակագիծը հանձարեղ կերպով պատրաստուած էր:

Գործակալատան այցելութեան օրն իսկ տիկն Լիու թարգմանել և ընդօրինակել տուած էր իր խնդրագիրը, և վաղայանք օրը, հաստատամիտ, կը գտնուէր նաւապետին ու անոր բարեկամներուն քովը, այն քարափին վրայ ուր փոխարքան ոտք պիտի կոխէր շաւ նստելէ առաջ:

Շատ չանցած, թնդանօթի հարուածներ ծանուցին կայսեր ներկայացուցչին ժամանումը, և թափորին գլխուն երեցաւ հարթափայրին ծայրէն, ուր առտուրնէ ի վեր խուռն բազմութիւն հաւաքուած էր:

Առջեւէն կը վազէին կայսերական սպասահանգերու ձով երկու մարդեր որք խորաղաններ ունէին ամբողջ բանալու համար:

Այս վազողները մեծագոյն կաղապակէին իրենց տիրոջ անունը: Անոնցմէ անմիջապէս ետքը կուգար ձիաւորներու և սպասաւորներու խումբ մը, որք կանոնաւոր ընդմիջումներով կը զարնէին պղինձէ ծնծղաններու վրայ:

Այս առաջին խմբակներէն յետոյ կուգային երեք մարդեր, երկաթաթել բարձր գլխարկներ դրած, որք կանանչ փետուրներով զարդարուած էին: Իշխանին զօրութեանը իբրեւ խորհրդանշան, անոնք շղթաներ կը կրէին որոց օղակները կը շարժէին կանոնաւոր չափով: Եւ անոնց ետին, ցուպերով և պամպուկներով զինուած մարդերու մէջտեղ, կը նշմարուէին երկու ծառաներ որք իրենց գլխուն վերեւ կը բռնէին լայն տախտակ մը որուն

վրայ գրուած էին ոսկեայ խոշոր տառերով Ն. Բարձրութեան անուններն ու տիտղոսները:

Յետոյ կուգար փոխարքային գահաւորակը:

Փառաւոր դեսպակ մըն էր, մետաքսէ վարագոյրներով զարդարուած և կամարած և տանիքով մը վերջացած՝ համակ արծաթէ ցանցկէնով:

Չորս մարդեր կը տանէին զայն, ուրիշ չորս մարդեր ալ անոնց կը հետեւէին իբրեւ օգնական:

Երկու հոգի կը կենային երեք չորս սպաներ և ծառաներ՝ լայն արեւարգելներով, յետոյ, քիչ մը աւելի հետուն կը տեսնուէին պալատական պաշտօնատարները:

Ճշմարտապէս արքայիկ այս թափոր վերջապէս կ'աւարտէր թաթար ձիաւորներու երկրորդ խումբով մը, սուր ի ձիոյն:

Ամբողջ բացուած էր ակնածանօք և կը լուր, վասըն զի Չինաստանի մէջ, հակառակ ուրիշ երկիրներու մէջ եղածին, մարդ լուր թեմք կը յայտնէ իր մեծարանքը, և գահաւորակը շուտով հասաւ քարափին այն տեղն ուր շքեղ կոնտուլ մը կառավարչին կըսպասէր: Ուրիշ տասը մակոյկներ պատրաստ էին հետեորդներն ընդունելու:

Այն պահուն երբ իշխանը գետինը ոտք կոխեց, Սօլ—Պրոտէի մայրը գողաց, բայց Բերքինս և իր բարեկամները, որոց ողջունին շնորհալի կերպով պատասխանած էր Ն. Բարձրութեանը, առաջ մղեցին զայն, և առանց գիտնալու թէ ինչպէս տեղի կ'ունենար այս բան, հէք մայրը յանկարծ ծնրագիր գտնուեցաւ կայսեր հօրեղբորդին առջև:

Իր յեղակարծ երեւում սպաններուն մէջ բուռն յուզում պատճառած էր և անոնցմէ երկուքը առաջ նետուած էին ետ հրելու համար զանիկա. բայց քննել իշխանը հրամայեց որ բան մը չընեն և գէպի անոր Բոնելով, անուշութեամբ հարցուց թէ ինչ կ'ուզէր:

—Արդարութիւն, Տէր, արդարութիւն աղջկանս համար, հեծեց տիկին Լիու իր հեծեծանքներուն մէջէն: Մահուան դատապարտեցին զայն, բայց անմեղ է, կ'երդնում:

Փոխարքան բանի մը բառ փոխանակեց իր քարտուղարներէ մէկուն հետ, ստիպեց խնդրարկուն որ ոտքի ելլայ և առնելով անոր ներկայացուցած աղերսագիրն ըսաւ.

—Գիտեմ խնդիրը և կը խոստանամ բնեւ այդ գործ՝ թուղթերը Բերքին ղրկելէ առաջ: Ուրիշ բան չեմ կրնար ընել: Մենէ ոչ որ օրէնքէն վեր է:

Մեծ արժանապատուութեամբ արտասանելէ յետոյ այս բառերը, հրաման մը տուաւ իր մէկ թիկնապահին՝

մինչ դէպ իր մակոյկը կ'ուղղուէր, և տիկին Լիու պիտի հեռանար, երբ այդ պաշտօնակալը անոր մօտենալով ըսաւ .

—Տիկին, Ն. Բարձրութիւնը կը խնդրէ որ չհեռանար : Մեհհանէն վերադարձին նորէն տեսնել կուզէ ձեզ : Հաճեցէք ինծի հետեիլ : Հօնանէ դարձին թափորին մէկ գահաւորակը պիտի նստիք պալատ երթալու համար :

Այս անակնկալ հրաւերին վրայ, խեղճ զինը իր բարեկամները փնտռեց, և Բերքինս քաջալերական շարժում մը ըրած ըլլալով իրեն, Լիու պատասխանեց թիկնապահին թէ պիտի հնազանդէր այդ հրամանին :

Փոխարքան իր կոնտոլին մէջն էր արգէն, որ Հօնան կղզին կ'ուղղուէր քսան թիւափորներու կողմէ և Բերքինս թնդանօթներուն կրկին արձակմամբը, Նստելով այն մակոյկին մէջ ուր առաջնորդած էին զինքը, տիկին Լիու նորէն նշմարեց նաւապետն ու սըր Արթիւրը : Անոնք ալ նաւակ նստած էին մեհհան երթալու համար :

Բայց, ոչ ինք ոչ իր պաշտպանը նշմարեցին երկու ջինացի նաւազներ, որք բազմութեան մէջ ծածկուած, ներկայ գտնուած էին մեր պատմած տեսարանին, առանց պարագայ մը կորսնցնելու :

Իշխանին մեկնումէն ի վեր, այլ եւս աչքէ չէին հեռացուներ Եւրոպացիները և կը ջանային իրենց մօտ պահել այն թեթեւ մակոյկը ուր նստած էին անոնք :

Այս նաւապետէն մէկը բարձրահասակ էր ու նիհար, և Էթէ Վարդ ընկերացած ըլլար տիկին Լիուի, անշուշտ պիտի ճանչնար զայն, հակառակ իր ծպտումին, թէեւ խնամով վար քաշած ըլլար գլուխը դրած յարգէլայն գլխարկը, վասն զի այս շուն էր, Պաթէօ—տՕ'որ փողոցին մտաւաճառը, որ երկու ամէս ի վեր անհետ եղած էր քուն—Սիէն և որուն վրայ բնաւ չէր խօսուած այլ եւս :

—Այսպէս, հարցուց իր ընկերոջ, ուժգնօրէն քաշելով հանգերձ իր թիակը, ապահով էս որ սա շունն օտարականը է՞ջիշնի հրամատարն է :

Բերքինսի երկկայմին անունն էր այս :

—Ապահով եմ, պատասխանեց նաւազը : Տասն անգամ տեսայ զինքը Պօքթա—Թիկրիսի մաքսային կայանը, երբ Մէնկ մանտարէնին տունը կերթար :

—Էթէն ո՞ր խարսխուած է :

—Լէնթեն կնգիին տակ : Մուսիմին (վեցամսեայ հով շնագնաց ծղկու) փոխուելուն կը սպասէ ճամբայ ելլալու համար :

—Իաւ ուրեմն, Պէնկալ չպիտի դառնայ, կերպնում, ապա թէ ոչ կարծիր—Մամուկ անունս կը կորսնցունեմ :

Եւ մեղմ ձայնով, ատելութեան անճառ շեշտով յարեց.

—Իսկ—Սիուի պաշտպանն հանդիսանալով, այն թշուառական աղջկան որ ինծի հետ խաղաց, Էթէնի նաւապետը երկիցս իմ թշնամիս եղած է :

Փոխարքան Հօնանի նաւաճատոյցին էր մօտեցած ուր իրեն կը սպասէին Պուտտայի բուրմերը :

Անմիջապէս մտաւ մեհհանին առաջին դռնէն ներս, և Զու կրցաւ անգամ մըն ալ տեսնել Բերքինսն ու սըր Արթիւրը, որք վերջին սիրալիր բարեւ մըն ալ ուղղիւէ ետք տիկին Լիուի, իրենք եւս մեհհանը մտան :

Այն ատեն մտաւաճառը թեթեւակի ցամաք ցատքեց և բազմութեան մէջ անհետացաւ :

Հօնանի այս մեհհանը, հակառակ իր վայելած համբաւին, բաւական տխուր գողափար մը կուտայ այն կարեւորութեան գոր ջինաստանի մէջ ունին կրօնական գործերը : Եթէ, ինչպէս որ կ'ըսեն իր պահապանները, իրաւ ամենէն հարուստն է կայսրութեան, քիչ երկիր կայ որոց աստուածութիւնները ասկից գէշ բնակարան ունենան :

Եթէ մակոյկով չերթուի հոն, այսինքն եթէ Հօնան կղզին ցամաքին հետ կապող կամուրջն երթուի, մարդ ստիպուած է անցնիլ քանթոնի ամենէն աղտոտ և ամենէն բազմաթիւր մէկ արուարձանէն :

Այս կամուրջին ծայրէն մինչեւ նուիրական տեղւոյն շրջափակը անձուկ գոհհներ կան միայն զորս գըրուած են մանաւադ ուտելեաց խանութներ և գրաւատուներ որք ընդհանրապէս խաղաբաններուն մօտ կը գտնուին :

(Շարունակելի)

 Հրատարակուեցաւ «Ույինէի Լէթայիֆի Ութերորդ տետրակն ար 20 տետրին բաժնեգրինն է Պուկարիոյ համար 2 ֆր. արտասահման շուկէս ֆր. կանխիկ :

Ի. Գ. ՀԻՆՏԼԵԱՆ

ՏԵՍԱՎԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱՎԱՆ

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պուկարեռէն լեզուի

Դին 1 ֆր.

Դիմել Հայերի խմբագրութեան :

Печатница „Взаимность“ — Варна